## Հ Ր Ա Մ Ա Ն  N 392-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«06» **ՕԳՈՍՏՈՍԻ** 2015 **Թ.** **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի (ծածկագիր՝ 14-2.1-16) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 5-ի N 5 որոշման եզրակացությունը և Լ. Մարտիրոսյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Լուսինե Վարդգեսի Մարտիրոսյանին 2015 թվականի օգոստոսի 7-ից նշանակել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի (ծածկագիր՝ 14-2.1-16) պաշտոնում:

Աշխատավարձը՝ ըստ հաստիքային ցուցակի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Պաշտոնակատար** **ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ**